էին սեպհական ժողովուրդ այնորիկ նախ քան զտիրապետութիւն երկրին Ռուսաց։

Զառաջեաւ վանացն 'ի մէջ ձորոյն 'ի Հիւսիսոյ՝ ուր գերեզմանքն են հնոյ ժամանակի, կառուցեալք են երկոքին գեղեցկաշէն տաճարք անուամբ զօրավարաց Ս. Մինասայ և Ս. Գէորգայ իրրև յանապատի. զորոց զտեղագրութիւնս չեղև միջոց մեզ առնել։

Ընդ կողմն հարաւային դրան Ս. Մինասայ եկեղեցւոյ է գերեզման Աշոտ Թագաւորի, ունելով այսչափ միայն արձանագիր "Աշոտ Թագաւոր Հայոց"։

Իսկ Տաճար Ս. Գէորգայ կառուցեալ 'ի Թուին Հայոց ՆԿԱ, 'ի Գագկայ Շահնշահէ, ունի արձանագիր շինութեան արտաքուստ յարևելից 'ի վերայ որմոյ սեղանոյն ըստ այսմ։

"Թիւ. ՆԿԱ. ով հոչակաւոր դու մեծ անուանիդ 'ի վկայս սուրբ Գէորգէոս, օգնեա բարեխօսութեամբ Գագկայ Շահնշահի շինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ, 'ի քոյդ բարեխօսութիւն յուսագնեալ. զի ընկալցի զողորմութիւն 'ի Քրիստոսէ յԱստուծոյ յանվախճան աքբայութեան ընդ ամենայն արդարացեալսն ապաշաւանաւք, հասանել լուսոյ փառաց որդւոյն Աստուծոյ 'ի վերջնում գիշերին 'ի ծագել մեծի և աներեկ առաւաւտին, այցելութիւն գտանել առաջի ահաւոր բեմի անաչառ դատաւորին աղաչեմք"։

Զայս տեղագրութիւն արարաք 'ի վանս անդ Հոռոմոսին յամի 1851, յորժամ յայցելութիւն գնացաք քաղաքամօրն Անւոյ. և էր վանահայր վանացն Պետրոս Վարդապետ։

ԷՖԷԼ ԷՐԷՎԱՆԵՑՈՒ

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Մեծաւորախութեամբ և գոհութեամբ կը փութամք հաղորդել մեր սիրելի Ազգայնոց, որ Վ.եհ. Կաթողիկոսը անցեալ փետր. ամսոյ 1 էն հետէ ենթակայ եղած անձնական տկարութենէն՝ որ մարտի սկիզբները յայտնապէս տենդի ևս փոխարկուեցաւ, նոյն ամսոյ 10 էն 'ի վեր կարևոր դեղօրէից գործածութեամբ ըստ բաւականին՝ առողջացած է։ Բժիշկք խորհուրդ կը տան օդափոխութեան երթալ և հանքային ջուրը մտանել։

Գեր. Սարգիս Ս. Արք Եպիսկոպոս Ջալալեանց՝ նախանդամն Սինոդի և Թեմական – Առաջնորդն Արցախոյ՝ ըստ խնդրանաց Հօտին իւրոյ՝ Հրամանաւ Վ.եհ. Հայրապետի՝ անցեալ մարտ ամսոյ 13ին Մայր Ս. Աթոռէս մեկնեցաւ Արցախոյ իւր Հօտին այցելութեան երթալոյ համար։

Հոգեզգօն Գրիգոր Ս. Եպիսկոպոս Սաղինեանց և Արժ. Յովակիմ Տէր Գրիգորեանց և Գրիգոր Գառնակերեանց Վարդապետքն՝ ներկայ տարւոյ համար Մայր Աթոռոյս Տնտեսական Կառավարութեան ժողովոյ Անդամ կարգուեցան։

Երևանայ Արժ. փոխ. – Թեմական հետևեալ գրութիւնը, որով Մեծ. Աղամալ Մելիք—Աղամալեանցի՝ իւր աղնուուհի Եղիսաբէթ մեր հանգուստեան եօթնօրեայ յիշատակին համար ըստ սովորութեան կատարուելիք ծախուց գումարը՝ բարի և գովելի դիտաւորութեամբ և նախանձելի օրինակ հանդիսանալոյ բաղձանօք՝ ազգօգուտ նպատակաց 'ի նպաստ նուիրելը կը հաղորդուի, կը փութամք սիրով և շնորհակալութեամբ հրատարակել, և միանգամայն մեր սիրելի համայն Ազգայնոց ուշադրութիւնը հրաւիրել առ այն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՔԱՅ ԱՄԱՍԳՐՈՅ

Երևանցի Ազնուական Աղամալն Մելիք Աղամալեանց 'ի 1ն ներկայ Մարտ ամսոյս իւրով յայտարարական խնդրագրով առաջի արար մեզ 'ի տեղի ծախուց ըստ տեղւոյս սովորութեան 'ի պատիւ եօթնօրեայ հանգստեան Ազնուուհւոյ ծնողի իւրոյ Եղիսաբէթի՝ զվաթսուն բուբլիս բաժանմամբ՝ Հոգեբաժին հասն սրբոյ Էջմիածնի տասն բուբ". Թեմական Դպրոցին Հայոց տասն բուբ". տեղւոյս Հայ – Օրիորդաց Դպրոցին քսան բուբ". և սրբոյն Յովհաննու Եկեղեցական Դպրոցին քսան բուբ"։ Սոյն այս Աստուածահաճոյ նուիրագործութիւն առնս ազնուականի այն հարկեաց զկս առաքմամբ յիշեալ յայտարարական խնդրագրոյն՝ խնդրել 'ի Խմբագրութենէ Արարատ պատուական ամսագրոյդ՝ տպագրութեան շնորհել զտեղի 'ի